ԿԱՐԾԻՔ

Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն պատմություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Աննա Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսությունը նվիրված է մանկավարժության ժամանակակից կարևորագույն խնդիրներից մեկին:

Հանրակրթության բարեփոխումների արդի փուլում, մանկավարժական ժամանակակից մոտեցումների համատեքստում ակներև է դարձել, որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման որոշ տեսանկյուններ՝ այդ թվում նաև մանկավարժական պայմանների առաջադրման, դրանց նորովի իմաստավորման և մեթոդաբանական հիմնավորման կարիք ունեն:

Այս տեսանկյունից քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որի նպատակը տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանների բացահայտումը և ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիրի մշակումն է:

Հետազոտությունը գրված է տրամաբանորեն ծրագրված պլանով, ունի սոցիալ-մանկավարժական նշանակություն, քանի որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման հիմնահարցը դիտարկվում է նրա սոցիալական ակտիվության, հանրամշակութային իրազեկության, ինքնառեֆլեքսիայի, ինքնազարգացման, կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից:

Ատենախոսության գիտատեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման հիմնախնդիրը մակարդակային տիրույթում սոցիոլոգիական, հոգեբանամանկավարժական, մեթոդական տեսանկյուններից դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ:

Ելնելով սրանից՝ ատենախոսության հեղինակը այն գիտական համոզմանն է, որ տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի

Հայտնի փաստ է, որ տարրական դասարաններում նոր չափորոշչով պայմանավորված առկա են խնդիրներ՝ կապված ոչ միավորային, առանց թվանշանի գնահատման հետ: Անհապաղ լուծումներ են պահանջում *ուսուցանող, զարգացնող, հայտորոշիչ*... գնահատման ռազմավարական նպատակներին հասնելու խնդիրները: Տվյալ դեպքում առավել առաջնահերթ է դառնում աշակերտների անհատական պատրաստությունը ուսուցման գործընթացում սեփական որակները գնահատելու, իր իսկ թույլ և ուժեղ կողմերն ընկալելու, դրանք վերլուծելու և դրանց ուղղությամբ քայլեր կատարելու առնչությամբ:

Նման մտայնությունը պահանջում է մշակել, ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ բացառիկ կարևորություն է տրվում մոտիվացված գործելաոճի ձևավորմանը, շահագրգռվածությանն ու փոխըմբռնմանը, ինչպես նաև համապատասխան կարողունակության ձևավորմանը:

Խոսքը վերաբերվում է ոչ միայն կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը առավել մոտիվացված դարձնելուն, ուսման նկատմամբ հետաքրքրությունը պահպանելուն, սեփական եսը գնահատելուն, այլ նաև դրան համապատասխան ժամանակակից տեխնոլոգիաներ ու ռազմավարություններ ներդնելուն: Բնական է, որ այս նպատակով անհրաժեշտ է նորացնել մանկավարժական գործընթացը, ներդնել արդիականացված մեթոդական բազա և գործիքակազմ:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ատենախոսի կողմից արվող այն շեշտադրմամբ, որ «...հանրակրթության համակարգում ներգրավված մարդկային ռեսուրսների մոտիվացիան ուղղակիորեն անդրադառնում է հանրակրթության որակի՝ նախապես պետական չափորոշիչներով սահմանված կրթական վերջնարդյունքների ու սովորողների ուսումնառության վրա: Ըստ հեղինակի. «... հանրակրթության զարգացման գրավականը մարդկային ռեսուրսներն են՝ իրենց գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով, փորձով ու փորձառությամբ, ... իսկ կատարողականի արդյունավետության բարձրացման գործում նշանակալի է ... մոտիվացիայի դերը»:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Հետազոտության ներածության մեջ ձևակերպված են հետազոտության նպատակը, այն է՝ «Տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացում բացահայտել կրտսեր դպրոցականի ինանագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները, մշակել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը նպաստող մեթոդական համալիր»: Ըստ այդ նպատակի, ձևակերպված են հետազոտության խնդիրները,

հետազոտության վարկածն ու մեթոդները, հետազոտության գիտական նորույթը, աշխատանքի տեսական, «կիրառական» նշանակությունները, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության իրականացման փուլերը:

Հետազոտության առաջին՝ «Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկավարժության մեջ» գլուխը ներառում է երկու ենթագլուխ և հիմնականում նվիրված է «ինքնագնահատականի ձևավորում» հասկացության տարբեր մեկնաբանություններին, տեսության մեջ դրա ընկալման հայեցակարգային մոտեցումների վերլուծությանը: Որոշակի անդրադարձ է կատարված կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ձևավորման առանձնահատկություններին և դրդապատճառներին: Դրական է այն հանգամանքը, որ այս գլխում հեղինակը հատուկ դիտարկման է ենթարկում աշակերտի սովորելու մոտիվացվածության փոխկապակցվածությունն ինքնագնահատականի ձևավորման հետ: Դրական փաստ է նաև այն, որ հեղինակի կողմից առանձնակի ընդգծվում են փնտրտուքները, «դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման... չափանիշների և բնութագրիչների» ընկալմանը բովանդակային առավել լայն ընկալում տալու ուղղությամբ:

Երկրորդ՝ «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները» գլխում հեղինակի կողմից քննվում են «...ինքնագնահատականի էությունն ու նրա ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները...» ինքնագնահատման կարողության ձևավորմանն ուղղված մանկավարժական գործընթացի պայմանների կարևորության հարցը: Ուսուցչի գործոնը, մոտիվացիայի ձևավորման, զարգացման, բազմակողմանի հետադարձ կապի ապահովման համատեքստում: Կարևոր է, երբ աշակերտի կողմից, ինքնաճանաչողության, ինքնավերլուծության, սեփական եսի գիտակցման հարցերը քննելիս, տարբեր տեսաբանների վկայակոչելով՝ բնութագրվում և փորձ է արվում ամբողջացնել ինքնագնահատականի «էությունը», մանկավարժական մասնագիտական առանձնահատուկ հանգամանքները: Հեղինակի կողմից կարևորվում և ուսումնասիրության են ենթարկվում նաև առնչությունները կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի և վերջինիս առողջության միջև:

Երրորդ՝ «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ժամանակակից պրակտիկան՝ տարրական դպրոցում» գլխում ներկայացված են ուսուցչի մասնագիտական գործառույթները, նրա կողմից կառավարվող և իրականացվող գործունեությունն՝ ուղղված կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը: Առկա են հեղինակի կողմից առաջարկվող մեթոդական առաջարկներ, որոնք փորձ է արվել ամբողջացնել «կրտսեր դպրոցականի *ինքնագնահատականի ձևավորման գործընթացի* կազմակերպման մեթոդական համալիր» ձևավորելով:

Ընդունելով ատենախոսության հեղինակ Աննա Գրիշայի Գալստյանի կողմից իրականացված ուսումնասիրություններնի, վերլուծությունների և հետազոտական աշխատանքի կարևորությունը, հարկ ենք համարում ներկայացնել որոշ դիտարկումներ, որոնց բացակայության դեպքում, մեր կարծիքով, աշխատանքն առավելապես կշահեր: Այսպիսով.

- Հետազոտության տեքստում հեղինակի կողմից որպես հիմնական հասկացություններ օգտագործվում են *«ինքնագնահատականի զարգացման գործընթաց», «ինքնագնահատականի ձևավորման գործընթաց», «ինքնագնահատականի ձևավորում», «ինքնագնահատման գործընթաց», «ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթաց»* արտահայտությունները, ինչը, կարծում ենք, ընդունելի չէ այն հիմնավորմամբ, որ որպես հիմնական հասկացություններ հանդես բերվող ձևակերպումները պետք է միանշանակ ընկալելի լինեն (էջեր 3;4):

- Կարծում ենք, որ *«ինքնագնահատականը»* անձի ձևավորման տարբեր շրջափուլերում, տարբեր հանգամանքներից ելնելով կարող է որոշակի փոփոխությունների ենթարկվել, ուստի ուսուցման որոշակի փուլում այն ընկալվում է որպես *վերջնարդյունք*: Ատենախոսն ինքը՝ վկայակոչելով Ռ.Շթայներին, նշում է, որ լիարժեք կրթություն ապահովելիս պետք է բավարարվեն տարիքն ի վեր երեխայի փոփոխվող կարիքները: Ուստ,կարծում ենք, ճիշտ կլիներ ինքնագնահատականին անդրադառնալ որպես կոնկրետ փուլի վերջնարդյունքի:

- Հիմք ընդունելով *«ինքնագնահատման կարողության ձևավորման»* բազմաշերտ և բազմաբովանդակ կառուցվածքը և վերջինիս առնչությունը հանրակրթության պետական նոր չափորոշչում արձանագրված *«ինքնաճանաչողական և սոցիալական»* կարողունակության հետ՝ այն, կարծում ենք, կդիտարկվի որպես *ինքնագնահատման կարողունակություն,* քանի որ ներառում է բազմաթիվ կարողություններ՝ այնպիսին, ինչպիսին են ինքնավերլուծությունը, ինքնաքննադատությունը, իրատեսական մոտեցումը և այլն: Չենք կարող անտեսել նաև տվյալ կարողունակության ձևավորմանը նպաստող գործնական հմտությունները և համապատասխան արժեհամակարգի գիտակցումը, ինչպես նաև անձի անհատական առանձնահատկությունները:

- Ճշգրտման կարիք ունեն ատենախոսի կողմից կիրառված *«մանկավարժահոգեբանական գիտություններ» «մանկավարժական ասպարեզ», «ինքնագնահատականի ձևավորման ոլորտ», «ուսումնական ոլորտ», «ինքնագնահատականի ձևավորման մեթոդիկաներ»,*

«ինքնագնահատականի ձևավորման տեխնոլոգիաներ», «Աստիճանասանդուղք մեթոդիկա» ձևակերպումները (էջեր 9;10):

- Ատենախոսության վերնագիրը շեշտը դնում է ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանների վրա, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտություն կար դրանք լիարժեք ներկայացնել հետազոտության տեսական և գործնական նշանակության ձևակերպումներում:
- Երկրորդ գլխի վերնագիրն, ըստ աշխատանքի բովանդակության ցանկի, գրեթե նույնն է, ինչ որ ատենախոսության ընդհանուր վերնագիրը, ինչը դժվարացնում է առանձնացնել մասնավոր քննարկման դրված հարցերը:
- Վիճելի է հետազոտության թեմայի համատեքստում Բլումի տաքսոնոմիան վկայակոչել սոսկ որպես չիմացությունից դեպի իմացություն գնալու ընթացք: Կարծում ենք վերլուծության թիրախն այս պարագայում բուրգի գագաթն է՝ *գնահատում/ արժևորում*, որտեղ ամփոփվում է արդեն ձևավորված ինքնագնահատման կարողունակությունը:
- Կարծում ենք, բացթողում է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման վրա ազդող հեղինակի կողմից ներկայացված հիմնական գործոնների շարքում չանդրադառնալ սովորողների անհատական առանձնահատկություններին՝ հոգեբանական, ժառանգական, խառնվածքային և այլն (էջեր 55-60):
- Հետազոտական հիմնական խնդրի պարզաբանմանն ուղված 2.3 ենթագլխում ատենախոսի կողմից թվարկված են «կրտսեր դպրոցականի ինքնագնահատման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները: Սակայն կարծում ենք, դրանցից յուրաքանչյուրին պատշաճ անդրադարձի պակաս կա, մասնավորապես հեղինակային մեկնաբանությունների տեսանկյունից (էջեր 77-79):
- Կարծում ենք, չափորաշչային ժամանակակից պահանջները հիմք ընդունելով՝ ոչ այնքան ընդունելի են «Մաթեմատիկա», «Ես և շրջական աշխարհը» առարկաներից ներկայացված առաջադրանքները, որտեղ պահանջվում է միավորային, կամ թվանշանային գնահատում (էջեր 86-89):
- «Աստիճանասանդուղք» մեթոդի կիրառման և դրա արդյունքների վերլուծության ու ամփոփման դեպքում ևս նկատվում է միավորային գնահատում, այս դեպքում՝ նաև ծնողի կողմից (էջ 98):

Նշված թերություններն ու նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության տեսական, գործնական նշանակությունն ու գիտական արժեքը:

Աննա Գրիշայի Գալստյանի «**Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները**» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01.- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս,

մ. գ. թ. Ա. Պ. Արնաուդյան

Ա.Պ. Արնաուդյանի ստորագրությունը հաստատում եմ.

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական քարտուղար՝

Հ. Հ. Փիլավջյան